«ՈՒՐԱԽ ՇԱԲԱԹ ԿԻՐԱԿԻ» ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Ուրախ շաբաթ կիրակի» առաջարկի շրջանակում «Տրիո», «Դուո» և «Սմարթ հեռուստատեսություն» ծառայությունների փաթեթների բոլոր այն բաժանորդների համար, ովքեր հաշվետու ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների դիմաց կվճարեն Օպերատորի կողմից սահմանված ժամկետում և ընթացիկ ամսվա ընթացքում չեն ունենա ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների մատուցման կասեցում, ապա ժամկետանց պարտքի պատճառով ընթացիկ ամսվա համար սահմանված ծառայությունների կասեցման օրվանից մինչև ժամկետանց պարտքի պատճառով հաջորդ ամսվա համար սահմանված ծառայությունների կասեցման օրը (սույն պայմաններում այսուհետ՝ Ամիս) ընկած ժամանակահատվածում՝ շաբաթ և կիրակի օրերին «Դուո», «Սմարթ հեռուստատեսություն» փաթեթներում կներառվեն «Ֆիլմադարան» բաժնի բոլոր ֆիլմերը: Սույն պայմանը չի կիրառվում այն դեպքում, երբ Բաժանորդի մոտ ակտիվ է «5 դիտում», «10 դիտում», «20 դիտում» կամ «100 դիտում» փաթեթներից որևիցե մեկը: Բաժանորդի մոտ «5 դիտում», «10 դիտում», «20 դիտում» կամ «100 դիտում» փաթեթներից որևիցե մեկն ակտիվ լինելու դեպքում, նշված օրերին դիտած ֆիլմերը կհանգեցնեն փաթեթում ներառված ֆիլմերի մնացորդային դիտումների քանակի նվազեցման:
Սույն կետում նշված պայմանը չի կիրառվում սերիալների ու սերիալների փաթեթների մասով, և սույն կետում նշված օրերին գործում են սերիալների ու սերիալների փաթեթների համար սահմանված պայմանները:
2. «Ուրախ շաբաթ կիրակի» առաջարկի շրջանակում «Մոնո» սակագնային փաթեթի բոլոր այն բաժանորդներին, ովքեր հաշվետու ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների դիմաց կվճարեն Օպերատորի կողմից սահմանված ժամկետում և ընթացիկ ամսվա ընթացքում չեն ունենա ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների մատուցման կասեցում, ապա ժամկետանց պարտքի պատճառով ընթացիկ ամսվա համար սահմանված ծառայությունների կասեցման օրվանից մինչև ժամկետանց պարտքի պատճառով հաջորդ ամսվա համար սահմանված ծառայությունների կասեցման օրը (սույն պայմաններում այսուհետ՝ Ամիս) ընկած ժամանակահատվածում՝ շաբաթ և կիրակի օրերին կտրամադրվի «Ինտերնետ»-ի 20 Մբ/վ արագություն:
3. Այն Բաժանորդը, ում արդեն տրամադրվել է սույն պայմանների կետ 1-ում և 2-ում սահմանված պայմանները շաբաթ և կիրակի օրերին և հաջորդող ամիսներից որևէ մեկի ընթացքում ունենում է ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների մատուցման կասեցում, ապա սույն պայմանների կետ 1-ում սահմանված պայմանը 1 Ամսով դադարում է գործել շաբաթ և կիրակի օրերին: Հաջորդող ամիսների ընթացքում ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների չկասեցման դեպքում Բաժանորդը կրկին կօգտվի սույն պայմաններով սահմանված «Ուրախ շաբաթ կիրակի»

հատուկ առաջարկից 1 Ամիս շարունակ: Սույն պայմաններով «Ուրախ շաբաթ կիրակի» առաջարկը շարունակում է գործել նաև հաջորդ ամիսներին՝ կախված այն հանգամանքից՝ Բաժանորդը ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների մատուցման կասեցում ունեցել է, թե՝ ոչ:

4. «Տրիո», «Դուո» և «Սմարթ հեռուստատեսություն» ծառայությունների փաթեթների և «Մոնո» սակագնային փաթեթի շրջանակում բաժանորդի դիմումի համաձայն Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման դեպքում «Ուրախ շաբաթ կիրակի» առաջարկի պայմանների կիրառման ժամկետը չի երկարաձգվում:
5. «Ուրախ շաբաթ կիրակի» առաջարկի տրամադրման ընթացքում, եթե Բաժանորդը անցում է կատարում սույն պայմաններում նշված մեկ այլ Ծառայության/ծառայությունների փաթեթի, ապա շարունակում է ստանալ նոր Ծառայության/ծառայությունների փաթեթի պայմաններով սահմանված «Ուրախ շաբաթ կիրակի» հատուկ առաջարկի պայմանները:
6. Եթե Բաժանորդը նախքան ժամկետանց պարտքի պատճառով ծառայությունների կասեցումը ակտիվացնում է «Տարաժամկետ վճարում» ծառայությունը և արդյունքում ժամկետանց պարտքի պատճառով Ծառայությունների մատուցման կասեցում տեղի չի ունենում, ապա տվյալ ամսվա ընթացքում ևս նա օգտվում է«Ուրախ շաբաթ կիրակի» հատուկ առաջարկի պայմաններից: